

ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կառավարող գործընկեր «Հովհաննիսյան և գործընկերներ» ՍՊԸ,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԻՄՔԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրված, վերլուծված և դասակարգված են արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման մի շարք հիմքեր և դրանց կիրառման ու մեկնաբանման առանձնահատկությունները և պայմանները: Մասնավորապես, վերլուծվել են վճռի չեղյալ ճանաչման այն հիմքերը, որոնք մատնանշվում են արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման վարույթի կողմի նախաձեռնությամբ, և այդ հիմքերի առկայության ապացուցման պարտականությունը կրում է դրանք մատնանշող կողմը: Հոդվածում մեջբերված և վերլուծված են նաև վերոհիշյալ հիմքերի կիրառմանն առնչվող միջազգային պայմանագրերը, մոդելային օրենքը և միջազգային փորձը: Առանձին ուշադրության են արժանացել չեղյալ ճանաչելու հիմքերի հետազոտման ժամանակ դատարանի կողմից պարզման ենթակա հարցերի շրջանակը, ինչպես նաև արբիտրաժային տերմինաբանության միատեսակ կիրառման մի շարք հարցեր:

Հիմնաբաներ - արբիտրաժ, արբիտրաժային վճիռ, Նյու Յորքի կոնվենցիա, արբիտրաժային վճռի վիճարկում, չեղյալ ճանաչում, վճռի կատարում, արբիտրաժային համաձայնություն:

Սույն հոդվածում քննարկվում են արբիտրաժային վճռի վիճարկման այն հիմքերը, որոնց դատարանը կարող է անդրադառնալ արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչմանը ձգտող կամ ճանաչման և հարկադիր կատարման դեմ առարկող կողմի հղման դեպքում: Անդրադարձ է կատարվում ինչպես արբիտրաժային համաձայնության հնարավոր անվավերությամբ կամ այլ թերություններով կնքված համաձայնությամբ պայմանավորված արբիտրաժային տրիբունալի իրավասության և այդ իրավասության սահմաններից դուրս գալու, այնպես էլ արբիտրաժի ընթացակարգի խախտումների հետ կապված հիմնախնդիրներին:

Արբիտրաժային վճիռների վիճարկման այն հիմքերի ընդհանուր բնութագիրը, որոնց դատարանն իր նախաձեռնությամբ չի կարող հղում կատարել. «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Արբիտրաժային օրենք) սահմանում է, որ արբիտրաժային վճիռը կողմի դիմումով կարող է դատարանի կողմից չեղյալ ճանաչվել, եթե ապացույցներ ներկայացվեն այն մասին, որ մասնավորապես նույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը (նկատի է առնվում դիմող կողմը), իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունը կողմերի ընտրած իրավունքի կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, անվավեր է: Մինչև համաձայ-

նության կողմի անգործունակության և համաձայնության անվավերության հարցերին անդրադառնալը, անհրաժեշտ ենք համարում համառոտ անդրադարձ կատարել արբիտրաժային համաձայնությանը որպես այդպիսին: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ ԶԳ-Օ) և Արբիտրաժային օրենքի մասնավորապես 7-րդ հոդվածի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ արբիտրաժային համաձայնության առկայությունը հանդիսանում է արբիտրաժի իրականացման նախապայման: Արբիտրաժային համաձայնությունը արբիտրաժային տրիբունալի՝ իր իրավասության մասին որոշում կայացնելու իրավունքի (competence – competence) հետ մեկտեղ հանդիսանում է այն հիմնաբարը, որի վրա հենված է արբիտրաժը՝ որպես ինստիտուտ: Ավելին, վավեր արբիտրաժային համաձայնության առկայությունը խոչընդոտում է վեճն ընդհանուր իրավասության դատարանում քննելուն և հանդիսանում է հայցն առանց քննության թողնելու հիմք¹: Այս առնչությամբ պրոֆեսոր Ա.Ս. Կոմարովը նշում է, որ Մոդելային օրենքի 8-րդ հոդվածի ուժով պետական դատարանների վրա դրված է վեճի կողմերի կողմից վեճն արբիտրաժային կարգով լուծելու համաձայնության պահպանման երաշխավորի գործառույթ²: Հարկ է նշել, որ Արբիտրաժային օրենքի 7-րդ հոդվածը գրավոր ձևին տալիս է լայն մեկնաբանություն. կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելուց սկսած մինչև էլեկտրոնային կամ

այդպիսի (արբիտրաժային) համաձայնության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ հաղորդումներ փոխանակելու միջոցով կամ հայցի ու պատասխանի վերաբերյալ հաղորդումների փոխանակմամբ, որտեղ մի կողմը վկայակոչում է արբիտրաժային համաձայնության առկայությունը, իսկ մյուս կողմը չի առարկում դրա դեմ: Արբիտրաժային համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված նաև, եթե արբիտրաժային համաձայնության մասին մի կողմի գրավոր առաջարկությունը որևէ ձևով ընդունել է մյուս կողմը: Բոլոր այս ձևերի ճիշտ ըմբռնումը փաստաբանների և դատավորների կողմից թույլ կտա առավել գրագետ սպասարկել արբիտրաժային վեճերը, իսկ իրավասու դատարանին՝ իրականացնել առավել արդյունավետ աջակցություն և վերահսկում արբիտրաժի նկատմամբ: Այսպիսով, արբիտրաժային համաձայնության գրավոր ձևով կնքված լինելու մասին դատողություն անելիս, անհրաժեշտ է բազմակողմանիորեն համադրել այդ համաձայնության կնքման, ներառյալ դրա առկայության կամ իսպառ բացակայության, վերաբերյալ բոլոր փաստական հանգամանքները: Անհրաժեշտ է նշել, որ Արբիտրաժային օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ կետը արբիտրաժային համաձայնության անբակտեղի մաս են համարում ցանկացած արբիտրաժային կանոնները, որոնց կողմերը հղում են կատարել իրենց համաձայնության մեջ: Ինչ վերաբերում է արբիտրաժային համաձայնության՝ գրավոր ձևով կնքված լինելու փաստի հաստատմանը, ապա, հաշվի առնելով կապի ժամանակակից միջոցների սրընթաց զարգացման տեսակերը, միջազգային մոտեցումները գնում են Նյու Յորքի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) II հոդվածով արբիտրաժային համաձայնության ձևի ընդլայնող մեկնաբանության ուղղությամբ, նշելով, որ այդ հոդվածում նշված ձևերը սպառնիչ չեն³:

Արբիտրաժային համաձայնության անվավերության և կողմի անգործունակության հիմքերով արբիտրաժային վճռի վիճարկման վարույթի հիմնախնդիրները. Արբիտրաժային համաձայնության անվավերությունը հանդիսանում է արբիտրաժային վճռի վիճարկման առանցքային հիմքերից մեկը: Դրան հաճախ հղում են արբիտրաժային վճռից դժգոհ և դրա չեղյալ ճանաչմանը ձգտող կողմերը: Արբիտրաժային համաձայնության անվավերությունը կարող է պայմանավորված լինել այն պահանջների խախտմամբ, որոնց այդպիսի համաձայնությունն ըստ կիրառելի Արբիտրաժային կամ այլ օրենքի պետք է համապատասխանի: Օրինակ, պարտադիր գրավոր ձևի խախտումը կամ արբիտ-

րաժային համաձայնություն կնքելիս կողմի մոլորությունը, գործունակությունը կամ իրավունակությունը: Այս առնչությամբ առաջ է գալիս արբիտրաժային համաձայնությունը գործարքների անվավերությանը հանգեցնող հիմքերով (խաբեության, մոլորության, բռնության, սպառնալիքի և այլն) անվավեր որակելու հնարավորության մասին հարցը: Անհրաժեշտ է ի սկզբանե նկատի ունենալ, որ արբիտրաժային համաձայնությունը գործարք չի համարվում⁴: Գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարեցնելուն⁵: Մինչդեռ արբիտրաժային համաձայնությունը հանգեցնում է իրավաբանական հետևանքների քաղաքացիական դատավարության իրավունքի ոլորտում: Մյուս կողմից, գործարքի անվավերության վերոհիշյալ հիմքերը անալոգիայով (օրենքի և իրավունքի) կիրառելի կարող են լինել նաև քաղաքացիական դատավարության ոլորտի համաձայնությունների հանդեպ, առավել ևս, որ այդպիսի անալոգիայի կիրառումը սահմանված է օրենքով⁶: Առևտրային արբիտրաժում ընդհանրապես (տեղական և միջազգային) արբիտրաժային համաձայնության արատները հաճախ են հանդիսանում արբիտրաժային վճռի վիճարկման հիմք: Կոնվենցիայի V հոդվածի 1-ին կետը թույլատրում է պետական դատարաններին մանրամասն քննության առարկա դարձնել արբիտրաժային վճռի դեմ արբիտրաժային համաձայնության գոյության և վավերության հիմքերով բերված կողմի բոլոր առարկությունները, անկախ այն հանգամանքից, որ նույն կետն արգելում է դատարանին օտարերկրյա արբիտրաժային վճռի ըստ էության վերանայումը: Այդ պատճառով, արբիտրները արբիտրաժային վճռներում պետք է ուշադրություն դարձնեն արբիտրաժային համաձայնության առկայության և վավերականության վերաբերյալ իրենց եզրահանգումներին, քանզի դրանք հանդիսանում են առավել խոցելիները և սերտորեն կապված են արբիտրաժային դատարանի՝ վեճը քննելու իրավասության հետ: Արբիտրաժային համաձայնության անվավերության հարցը քննելիս անհրաժեշտ է նաև անդրադառնալ այն հարցին, թե ինչպես արբիտրները և դատավորները պետք է հետազոտեն այդ հարցի հիմնավորվածությունը: Առաջին հերթին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն պետության նյութական իրավունքի ընտրությանը, համաձայն որի պետք է որոշվի արբիտրաժային համաձայնության անվավերությունը: Արբիտրաժային համաձայնության

արատները կարելի է պայմանականորեն դասակարգել ըստ հետևյալ երեք չափանիշների. անվավերություն, գործողություն (ուժ) և կատարելիություն: Այսպես, վավերության բացակայությունը (անվավերությունը) կարելի է որոշել՝ ելնելով արբիտրաժային համաձայնություն կնքողի կամքի ակնհայտ արատից կամ իրավասությունների անվերապահ և ակնհայտ բացակայությունից: Արբիտրաժային համաձայնության՝ ուժը կորցրած լինելու տակ կարելի է հասկանալ վավեր արբիտրաժային համաձայնության գործողության դադարումը այն կնքած անձանց կամքով: Կատարելիության անհնարինությունը կարող է պայմանավորված լինել, օրինակ, արբիտրաժն իրականացնելու ֆիզիկական անհնարինությամբ, երբ ասենք կողմերի ընտրած արբիտրը մահացել է, և կողմերը չեն ցանկանում այլ արբիտր նշանակել, կամ արբիտրաժային համաձայնության այնպիսի անհստակ ձևակերպմամբ (պաթոլոգիկ), որն իրականում այն իրագործելու անհնարինություն կարող է առաջացնել⁷:

Կոնվենցիայի անգլերեն բնօրինակում (կետ 3, հոդված II) և Մոդելային օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում⁸ օգտագործված է «null and void» եզրույթը, որը հայերեն նշված փաստաթղթերի տեքստերում թարգմանվել էր որպես «անվավեր» և «ուժը կորցրած», մինչդեռ ճիշտ թարգմանությունն է «առ ոչինչ»⁹: Անվավերությունն իր մեջ ներառում է ինչպես առ ոչինչ, այնպես էլ վիճահարույց գործարքները¹⁰: Տվյալ դեպքում Մոդելային օրենքի մշակողները, հենվելով Կոնվենցիայում առկա տրամաբանության վրա, նպատակ են ունեցել կիրառելու հենց առոչնչության գաղափարը: Նշված տերմինաբանության ոչ միասնական թարգմանության և հետևաբար ոչ միատեսակ գործածության մասին է վկայում Արբիտրաժային օրենքի 8-րդ հոդվածը, որտեղ «null and void» եզրույթը թարգմանված է որպես առ ոչինչ: Կոնվենցիայի V-րդ հոդվածի 1-ին կետի և Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածների անգլերեն բնօրինակներում օգտագործված է «not valid» (անվավեր) եզրույթը, որտեղ հեղինակները ցանկացել են ընդգծել և կարգավորել արբիտրաժային համաձայնության անվավերությամբ պայմանավորված հարաբերությունները: Վերլուծելով Կոնվենցիայի և Արբիտրաժային օրենքի նշված հոդվածները՝ կարելի է գալ հետևյալ եզրահանգմանը. Կոնվենցիայի II հոդվածի 3-րդ կետը հանդիսանում է նույն հոդվածի 1-ին կետի ճշգրտումը, որը սահմանում է արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում վեճի կողմերին արբիտրաժ ուղղորդելու սկզբունքը: Տվյալ

դեպքում դատարանը պարզում է միայն արբիտրաժային համաձայնության առերևույթ առոչնչության հարցը, մինչդեռ անվավեր գործարքի տեսակ հանդիսացող վիճահարույց գործարքի առկայության հարցը պարզելու համար դատարանն անխուսափելիորեն կընկղմվի վեճի էության մեջ, ինչն անթույլատրելի է՝ հաշվի առնելով արբիտրաժին դատական միջամտության օրենսդրական և կոնվենցիոն սահմանափակումները: Մյուս կողմից, Կոնվենցիայի V հոդվածի 1-ին կետի «a» ենթակետը (Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածները) նախատեսում է արդեն արբիտրաժային համաձայնության անվավերության հարցը քննելու դատարանի լիազորությունը (եթե դիմող կողմը ներկայացնի այդ հիմքը): Այսինքն՝ երբ արբիտրաժային տրիբունալը, արբիտրաժային համաձայնության վավերականության հարցը պարզելով, իրականացնում է արբիտրաժ և վճիռ է կայացնում, դրանից հետո միայն օրենսդիրն իրավունք է վերապահում դատարանին արբիտրաժային վճիռը վիճարկող կողմի դիմումի հիման վրա վերլուծել արբիտրաժային տրիբունալի՝ արբիտրաժային համաձայնության վավերության մասին եզրահանգումների ճշմարտացիությունը՝ այդ թվում անդրադառնալով արբիտրաժային համաձայնության (ներառյալ այն պայմանագրի, որում արված է արբիտրաժային վերապահում) վիճահարույց լինելու խնդրին: Ակնհայտ է որ Կոնվենցիայի II հոդվածի 3-րդ կետի հայերեն սխալ թարգմանությունը խաթարում է դրա իմաստը և հակասության մեջ է մտնում Արբիտրաժային օրենքի 8-րդ հոդվածի հետ:

Արբիտրաժային համաձայնությունների առոչնչության և անվավերության մեկնաբանման մոտեցումները միջազգային պրակտիկայում Կոնվենցիայի II հոդվածի համատեքստում հանգում են հետևյալին¹¹: Արբիտրաժային համաձայնություններն առոչնչ են ճանաչվում կամքի ակնհայտ արատների առկայության դեպքերում¹² (սխալի, խաբեության, հարկադրանքի, lex societatis – ով ձևակերպված նորմերի և իրավունքի հիմանարար սկզբունքների միջև հակասության): Մինչդեռ անվավերության հարցերի պարզումը (արբիտրաժի սկզբնական փուլերում), ներառյալ իրավասությունների հարցի պարզման դեպքերը, պետական դատարանները վերապահում են հենց արբիտրաժային տրիբունալներին: Այսպիսով, միջազգային պրակտիկայում ընդունված է ելնել արբիտրաժային համաձայնության վավերության կանխավարկածից¹³: Այս առնչությամբ հիրավի դասական օրինակ է համարվում «Մոյուզնեվտեքսպորտ» ընդդեմ «Ջեկ Օյլ Լիմիթեդի» գործով 1984թ. հուլիսի 9-ի

ՍՍՀՄ ԱԱՊ-ին առընթեր Արտաքին Տնտեսական Արբիտրաժային Հանձնաժողովի հետևյալ ձևակերպումը. «Արբիտրաժային համաձայնությունը կարող է անվավեր ճանաչվել սոսկ այն դեպքում, եթե դրանում հայտնաբերվեն կամքի արատներ (մոլորություն, խաբեություն և այլն), կնքված արբիտրաժային համաձայնության բովանդակությանը և ձևին ներկայացվող օրենքի պահանջների խախտումներ»¹⁴:

Արբիտրաժային վարույթի իրականացման ընթացակարգային թերությունների հետ կապված արբիտրաժային վճռի վիճարկման հիմքերը. Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դ) ենթակետի համաձայն՝ արբիտրաժային դատարանի վճիռը կարող է չեղյալ ճանաչվել, եթե արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը, եթե այդ համաձայնությունը չի հակասում Արբիտրաժային օրենքի պարտադիր դրույթներին կամ մնան համաձայնության բացակայության դեպքում չի համապատասխանել Արբիտրաժային օրենքին: Արբիտրաժային տրիբունալի կազմի՝ արբիտրաժային համաձայնությանը չհամապատասխանելը կարող է դրսևորվել այն դեպքերում, երբ այդ համաձայնությանը կամ հատակ սահմանված են այն չափանիշները կամ արբիտրները, որոնք պետք է լուծեն վեճը, կամ հղում է կատարված ինստիտուցիոնալ արբիտրաժային համաձայնության կանոններին, որոնք սահմանում են տրիբունալի (հիմա – արբիտրաժային դատարանի) կազմին ներկայացվող հստակ պահանջները: Օրինակ, եթե արբիտրաժային համաձայնությանը սահմանված է, որ վեճը պետք է քննվի արբիտրաժային դատարանի կողմից կազմով՝ բաղկացած իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող երեք անձից, սակայն այն քննվում է միանձնյա կազմով. այդպիսով խախտվում է արբիտրաժային համաձայնությանը սահմանված կազմին ներկայացվող պահանջը: Տվյալ դեպքում, արբիտրաժային վճիռը կարելի կլինի դրական ելքով վիճարկել՝ պայմանով, որ այն վիճարկող կողմ տրիբունալի կազմի դեմ իր առարկությունները ներկայացրած լինի արբիտրաժային վարույթի ժամանակ՝ Արբիտրաժային օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված ժամկետում և կարգով: Հաճախ կազմի անհամապատասխանությունը պայմանավորվում է դրա կազմավորման համար սահմանված ընթացակարգի խախտումներով: Այսպիսով, Արբիտրաժային օրենքը սահմանում է արբիտրաժի իրականացման համար հիմք հանդիսացող մի շարք նախապայմաններ և ընթա-

ցակարգի իմպերատիվ նորմեր, որոնք չպետք է խախտվեն նույնիսկ կողմերի համաձայնությամբ: Դրանով օրենսդիրն ապահովում է արբիտրաժային հարաբերությունների կայունությունն ու կանխատեսելիությունը: Միևնույն ժամանակ, օրենսդրորեն ամրապնդված է ընթացակարգի հարցերը որոշելու՝ կողմերի իրավունքը, ինչը հանդիսանում է կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքների օրենսդրական ամրապնդումը: Ընդհանուր կանոնի համաձայն՝ կողմերի կամքն ընթացակարգային հարցերի որոշման գործում պետք է չհակասի օրենքի իմպերատիվ նորմերին: Այն պետք է գերակայի կողմերի ընտրած կանոնների համապատասխան դրույթի նկատմամբ: Կողմերն ազատ են որոշելու թե՛ վեճերի լուծման եղանակը, թե՛ Կանոնները և թե՛ ընթացակարգը:

Ինչ վերաբերում է Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետով նախատեսված հիմքին, ըստ որի արբիտրաժային վճիռը վիճարկող կողմը պատշաճ ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից, ապա կարող ենք արձանագրել հետևյալը: Յուրաքանչյուր կոնկրետ գործով արբիտրաժային դատարանն ինքն է որոշում նշված նորմի կիրառելիության սահմանները: Հարկ է նշել, որ պատշաճ ծանուցման ինստիտուտն արբիտրաժում տարբերվում է քաղաքացիական դատավարության նույն ինստիտուտից: Արբիտրաժում պատշաճ ծանուցումն ունի ավելի ազատական և պրագմատիկ բնույթ, ինչը պայմանավորված է արբիտրաժի կողմերի՝ իրենց դատավարական իրավունքներից բարեխղճորեն օգտվելու և ընդհանրապես քաղաքացիական շրջանառության սուբյեկտների բարեխղճության կանխավարկածով: Հայրենի դատական պրակտիկայում սովորական երևույթներ են դարձել ծանուցագիր չստանալը, ծանուցման սխալ հասցեներ նշելը, փաստաբաններին հաճախակի փոխելը և պարզապես դատական նիստերին չներկայանալը: Այս և արատավոր շատ այլ երևույթներ դատական գործերի քննության ժամկետները ձգում են տարիներով և, շեքսպիրյան լեզվով ասած, դրանց ողջամիտ կոչվելն անարժան դարձնում: Արբիտրաժի՝ առանց անհարկի ձգձգումների իրականացման սկզբունքն իր արտացոլումն է գտել Արբիտրաժային օրենքի մասնավորապես 3-րդ հոդվածում: ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն Եվ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013թ. հուլիսի 4-ի Արբիտրաժային տրիբունալի վճիռը որպես պար-

տաղիր ճանաչելու և արբիտրաժային տրիբունալի վճռի հիման վրա կատարողական թերթ տրամադրելու մասին թիվ ԵԿԴ/2366/02/12 (այսուհետ՝ թիվ ԵԿԴ/2366/02/12 գործ) գործի քննության ընթացքում դիմողի ներկայացուցիչը նշել է, որ արբիտրաժի կողմից ուղարկված ծանուցումները Ծ. Կնյազյանը իր ՀՀ-ի բնակության վայրի հասցեում ստացել է, քանի որ արբիտրաժի գործի նյութերում առկա է այն ստանալու փաստը հաստատող ապացույցը:»: Դատարանը, սակայն, արձանագրել է, որ «...Վերը նշված փաստերն ուսումնասիրելով առանձին-առանձին ու միմյանց համադրելով՝ դատարանը գործով ապացուցված է համարել, որ իրականում Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի միանձնյա արբիտրաժային տրիբունալի կողմից քննված գործով Ծերուն Կնյազյանը պատշաճ ծանուցված չի եղել, քանի որ Ծերուն Կնյազյանն արբիտրաժի կողմից գործը քննվելու պահին, մասնավորապես՝ 2012 թվականի ընթացքում, ինչպես նաև այն պահին, երբ կայացվել է թիվ 002-71/05/12 վճիռը, այսինքն՝ 2012 թվականի սեպտեմբերի 26-ին, բացակայել է Հայաստանի Հանրապետությունից ու փաստացի գտնվել է Ռուսաստանի Դաշնությունում: Փաստորեն, դիմումով ներկայացված՝ արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու պահանջի ապացուցման առարկան կազմող իրավաբանական նշանակություն ունեցող փաստերից վեճի առարկա հանդիսացող փաստերը դատարանը գործի փաստերով հիմնավորված է համարել, հետևապես՝ հակառակ փաստի ապացուցման բեռը կրում է Բանկը, որը պետք է դատարանին ներկայացներ ապացույցներ՝ Ծերուն Կնյազյանին Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի միանձնյա արբիտրաժային տրիբունալի կողմից Ռուսաստանի Դաշնության փաստացի բնակության վայրի հասցեով ծանուցվելու մասին, ինչպես նաև պետք է ապացուցեր գործի դատաքննության ընթացքում իր իսկ վկայակոչած այն փաստարկը, համաձայն որի՝ արբիտրաժի կողմից ուղարկված ծանուցումները Ծ. Կնյազյանն իր ՀՀ-ի բնակության վայրի հասցեում ստացել է, քանի որ արբիտրաժի գործի նյութերում առկա է այն ստանալու փաստը հաստատող ապացույցը»: Տվյալ դեպքում, պարտապահի կողմից արբիտրաժի ուղարկված ծանուցումների չստանալու փաստն ինքնին հիմք չէր կարող հանդիսանալ արբիտրաժային վճռի՝ սույն հոդվածում քննարկվող հիմքով չեղյալ ճանաչելու համար: Վճռի տեքստից երևում է, որ դիմողը պարզապես չի ապացուցել արբիտրաժի կողմից ծանուցումներն ուղարկելու փաստը, որպիսի պարագա-

յուն կգործեր Արբիտրաժային օրենքի 3-րդ հոդվածը, և վճռի վիճարկման հիմքում չէր դրվի Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետը: Դատարանը չի ստացել արբիտրաժի կողմից պատասխանողին (պարտապահին) ծանուցազիր «ուղարկելու» ապացույց և իրավաչափորեն հանգել է այն եզրակացության, որ առկա է Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետով նախատեսված հիմքը և արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ է ճանաչել: Երբեմն նշված հիմքը կարող է առաջանալ, երբ, օրինակ, կողմին չի տրվում թույլատրելի և վերաբերելի ապացույցներ ներկայացնելու ողջամիտ ժամկետ (Արբիտրաժային օրենքով նախատեսված բացառություններով), կամ արբիտրաժային տրիբունալը լրացուցիչ վճիռ կայացնելիս չի տեղեկացնում մյուս կողմին և հնարավորություն չի ընձեռում վերջինիս՝ իր դիրքորոշումը ներկայացնելու:

Արբիտրաժային համաձայնության գործողության ուժը: Այս հարցը որոշելու համար անհրաժեշտ է նախևառաջ պարզել, թե արբիտրաժային համաձայնությունն առանձի՞ն է կնքված, թե՞ ունի արբիտրաժային վերապահման ձև: Առաջին դեպքում արբիտրաժային համաձայնագրի լուծման մասին կողմերի համաձայնությունը բավարար է այն լուծված համարելու համար, հատկապես եթե համաձայնությունը սահմանել է պայմանագրից բխող վեճերի արբիտրաժային կարգավորում¹⁵: Ինչ վերաբերում է արբիտրաժային վերապահմանը, ապա պետք է փաստենք, որ այն օժտված է այսպես կոչված լրացուցիչ կենսունակությամբ, ինչն ամրապնդվում է նաև դրա «ինքնավարության» տեսության ուժով¹⁶:

Արբիտրաժային համաձայնության անվավերության և կողմի անգործունակության խնդիրները սերտորեն կապված են արբիտրաժային դատարանի իրավասության վիճարկման հիմքով արբիտրաժային վճռի վիճարկման հետ: Վեճը լուծելու իրավասության հիմքով վիճարկման հիմնահարցերը մենք կքննարկենք ստորիվ:

Արբիտրաժում պարտված կողմն արբիտրաժային համաձայնության կնքման պահին անգործունակ լինելու մասին փաստարկներ բերելով՝ ձգտում է անվավեր դարձնել արբիտրաժի համար հիմք հանդիսացած արբիտրաժային համաձայնությունը, ինչն անխուսափելիորեն և ինքնաբերաբար կհանգեցնի արբիտրաժային տրիբունալի՝ վեճը լուծելու իրավասության բացակայությանը: Կողմի մասն փաստարկը քննող պետական դատարանը անպայման պետք է անդրադառնա այն հարցին,

թե արդյո՞ք նույն փաստարկը ժամանակին ներկայացվել է արբիտրաժային տրիբունալին: Ինչպես նշեցինք, միշտ չէ, որ արբիտրաժային վերապահման անվավերության հարցը լուծելիս այն պետք է ենթարկել այն նյութական իրավունքին, որով կարգավորվում է հիմնական պայմանագիրը: Արբիտրաժային համաձայնության վավերության հարցը լուծելիս կիրառելի իրավունքը որոշելուց զատ դատարանը պետք է ուշադրություն դարձնի նաև այդ համաձայնության կողմերի գործունակության խնդրին: Ընդ որում, անգործունակությունը պետք է որոշվի արբիտրաժային համաձայնության կողմի հանդեպ կիրառելի իրավունքով: Նման դրույթ է սահմանված նաև Ժնևի Կոնվենցիայում (հոդված VI, կետ 2): Այսպիսով, գործում է անձնական օրենքը (lex personalis կամ lex societatis): Կարևոր է, որ դատարանները տարանջատեն կիրառելի նյութական իրավունքը հիմնական պայմանագրի, արբիտրաժային համաձայնության (վերապահման) և արբիտրաժի կողմի գործունակության կամ անգործունակության հարցերը պարզելիս:

Կողմի անգործունակության հարցը քննարկելիս անհրաժեշտ ենք համարում ևս մեկ անգամ մատնանշել, որ հայրենական օրենքի 34 և 36-րդ հոդվածները ճիշտ չեն թարգմանվել: Բանն այն է, որ Սողեյալին օրենքը և Կոնվենցիան (հոդվ. V կետ 1, ենթակետ «ա») անգլերեն բնօրինակներում օգտագործում են «was under some incapacity» արտահայտությունը, որը թարգմանաբար նշանակում է «եղել է որոշ չափով անիրավունակ» կամ «իրավունակության արատ»: Բացի այդ, «գործունակություն» եզրույթը մեր իրավական համակարգում գործածելի է ֆիզիկական անձանց առնչությամբ, մինչդեռ իրավաբանական անձանց դեպքում գործածվում է «իրավունակություն» եզրույթը: Օտարերկրյա կողմի մասնակցությամբ արբիտրաժային վեճով կայացրած վճռի վիճարկման հարցը քննելիս դատարանը առաջին հայացքից ex officio պարտավոր է ՀՀ ՔՕ 1255 ուժով պարզել օտարերկրյա իրավունքի նորմերի բովանդակությունը օտարերկրյա կողմի իրավունակությունը պարզելու համար, սակայն ելնելով վերոթվարկյալ առանձնահատկություններից (կողմի նախաձեռնությամբ ներկայացվող հիմքերի առումով)՝ կարող է առաջանալ հակասական իրավիճակ: Իրավական տարբեր համակարգերում այս խնդիրը լուծվում է յուրովի: Կարծում ենք, որ, կողմերի մրցակցային սկզբունքից ելնելով, իրավունքի որոշման հարցում ևս նախաձեռնությունը պետք է վերապահել կողմերին: Առավել ևս, որ իրավունակության բացակայության հիմքով արբիտրաժային վճիռը վիճարկող

կողմն ինքն է կրում դրա ապացուցման պարտականության բեռը:

Արբիտրաժային պրակտիկայով զբաղվող փաստաբանները պետք է նկատի ունենան, որ պայմանագրից բխող, դրա հետ կապված, դրա վերաբերյալ բոլոր վեճերը մեկ միասնական մարմնում՝ արբիտրաժային դատարանում, քննելու համար արբիտրաժային համաձայնությունները հարկ է նախատեսել հնարավորինս լայն՝ դրանցում ներառելով նաև պայմանագրի և արբիտրաժային համաձայնության անվավերության և առնչության հարցերը: Արբիտրաժային համաձայնության գործողության դադարման խնդրահարույց հարցերից է նաև պահանջի զիջման և պարտքի փոխանցման դեպքերում: Ծիշտ է, իրավաբանական գրականության մեջ գերակշռող կարծիքների համաձայն, արբիտրաժային համաձայնությունը պահպանում է իր ուժը նշված գործարքների դեպքում ևս¹⁷: Սակայն, նման գործարքներ նախապատրաստելիս կարելի է արբիտրաժային վերապահման վերաբերյալ հատուկ դրույթ սահմանել՝ նշելով, որ այն շարունակում է պահպանել իր ուժը՝ դրանով իսկ հետագայում գրկելով մյուս կողմին նշված փաստարկով արբիտրաժային համաձայնությունը, արբիտրաժային տրիբունալի իրավասությունը և որպես հետևանք՝ արբիտրաժային վճիռը վիճարկելու գալթակողությունից:

Արբիտրաժային դատարանի իրավասության բացակայության հիմքով արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հիմնախնդիրները. Զննարկելով Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածների գ) ենթակետում սահմանված հիմքերով արբիտրաժային վճռի վիճարկման հիմնախնդիրները, կարող ենք նշել, որ դրանք այլ կերպ վերաբերում են արբիտրաժային դատարանի իրավասության առկայության կամ բացակայության հիմքերին: Արբիտրաժային օրենքի 16-րդ՝ «Արբիտրաժային տրիբունալի՝ իր իրավասության վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը», հոդվածում ամրագրված են արբիտրաժի երկու հիմնարար դրույթներ. դրանք են «competence – competence» (իր իրավասությունների մասին որոշում կայացնելու իրավասությունը) և արբիտրաժային համաձայնության «ինքնավարությունը»: Վերոհիշյալ հիմքերով արբիտրաժային վճռի վիճարկման հարցի ուսումնասիրության նպատակով նախ անհրաժեշտ է անդրադառնալ նշված երկու դրույթների հասկացությանը: «Competence – competence» սկզբունքը նշանակում է, որ արբիտրաժային դատարանը, արբիտրաժային վարույթի սկզբնական փուլից սկսած և վարույթի ընթացքում, օժտված է իր լուծմանը

հանձնված վեճը լուծելու իր իրավասության առկայության մասին, առանց իրավասու դատարան դիմելու, որոշում կայացնելու իրավունքով¹⁸ : Արբիտրաժային համաձայնության (վերապահման) «հնքնավարությունը» օրենքի ուժով արբիտրաժային տրիբունալին օժտում է արբիտրաժային համաձայնության վավերականության կամ առկայու-

թյան հարցերը քննելու և լուծելու իրավասությամբ, ընդ որում այդ հարցերը քննվում և լուծվում են անկախ այն պայմանագրի անվավերության հարցի քննարկման, որում ներառված է արբիտրաժային վերապահումը, կամ որին վերաբերում է արբիտրաժային համաձայնությունը:

¹ ՀՀ ԲԴՕ, հոդված 103, կետ 3: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենք, հոդված 8:

² Տե՛ս Комаров А.С. Разрешение международных коммерческих споров. С. 27. Արբիտրաժային համաձայնության պարտադիր բնույթի մասին և արբիտրաժային վարույթի՝ սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքին համապատասխանության օգտին է արտահայտվել ՌԴ Սահմանադրական դատարանը, տե՛ս 1999թ. N 191-Օ և 2000թ. N 214-Օ որոշումները:

³ Տե՛ս UNCITRAL-ի 2006թ. 39-րդ նստաշրջանի նյութերը (Մոդելային օրենքի փոփոխություններն ու լրացումները) և Նյու Յորքի Կոնվենցիայի II հոդվածի 2-րդ և VII հոդվածի 1-ին կետերի մեկնաբանման վերաբերյալ առաջարկությունները (Հավելված III):

⁴ Տե՛ս Суханов Е.А. Третейский суд. 2000. N 5. С. 46 – 47.

⁵ ՀՀ ԲՕ, հոդված 289:

⁶ ՀՀ ԲԴՕ, հոդված 10:

⁷ Տե՛ս Yearbook Commercial Arbitration. Vol. XII. P. 438.

⁸ Այս մասին՝ ստորիվ՝ արբիտրաժային տրիբունալի իրավասությունների մասին պարբերությունում:

⁹ Այս հանգամանքի վրա հրավիրվեց «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի բարեփոխման վրա աշխատող խմբի և ՀՀ արդարադատության նախարարության ուշադրությունը, և 2015թ. հունիսի 19-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը, որտեղ, ի թիվս այլոց, սույն հարցին նույնպես լուծում տրվեց:

¹⁰ Տե՛ս Պայմանագիրն իր ուժը կարող է կորցնել ժամկետի ավարտմամբ դադարելու, կողմերի փոխադարձ համաձայնությամբ այն դադարեցնելու, պարտավորությունների կատարման և այլ դեպքերում: Ավելին, արբիտրաժային վերապահման ձևով կնքված արբիտրաժային համաձայնություններն իրենց ուժը կարող են պահպանել նաև հիմնական պայմանագրի դադարումից հետո: Մյուս կողմից, եթե նույնիսկ օրենսդիրը «պայմանագրի ուժը կորցրած» արտահայտության տակ նկատի է ունեցել դրա անվավերության հետևանքով ուժը կորցնելը, միևնույնն է, սովյալ արտահայտությամբ արբիտրաժային դատարանի վրա դրվել է լրացուցիչ բեռ: Պայմանագրի՝ ուժը կորցրած կամ անվավեր լինելու փաստը հաստատելը ենթադրում է արբիտրաժային տրիբունալի կողմից սեփական նախաձեռնությամբ պայմանագրի վիճահարույցության և գործողության դադարման հարց բարձրացնելու իրավասություն, այն պարագայում, երբ վեճի կողմերը մնան հայտարարություններով հանդես չեն գալիս:

¹¹ Տե՛ս Руководство МСКА по толкованию Нью-Йоркской Конвенции 1958г., при содействии Постоянного Третейского Суда Дворец Мира, Гаага, пособие для судей, Инфотропик медиа 2012, Москва – Берлин, 137, С. 29 – 49.

¹² Տե՛ս Yearbook Commercial Arbitration. Vol. XII. P. 534:

¹³ Տե՛ս Yearbook Commercial Arbitration. Vol. X. էջ 368:

¹⁴ Տե՛ս Yearbook Commercial Arbitration. Vol. XV. էջեր 384 - 435:

¹⁵ Տե՛ս Попов М.А. Теоретические и практические проблемы российской модели регулирования деятельности третейских судов: Автореф. дис. канд. юрид. наук. СПб, 2001. С. 13.

¹⁶ Տե՛ս Минаков А.И. Арбитражные соглашения и практика рассмотрения внешнеэкономических споров. М.: Юрид. лит., 1985, С. 85. Տե՛ս Fouchard, Gaillard, Goldman. On International Commercial Arbitration. Kluwer Law International. 1999, էջ 214, «Ինքնավարության սկզբունքն անկասկած հանդիսանում է այն գործընթացի առաջին փուլը, որի արդյունքում արբիտրները կարողանում են սեփական իրավասության վերաբերյալ դատողություններ անել: Հենց արբիտրաժային համաձայնության ինքնավարության շնորհիվ է, որ հիմնական պայմանագրի վավերության դեմ ցանկացած փաստարկ չի ունենա ուղղակի ազդեցություն արբիտրաժային համաձայնության և, հետևաբար, արբիտրաժի իրավասության վրա:»:

¹⁷ Տե՛ս Мусин В.А., Арбитражная оговорка во внешнеэкономическом контракте и проблема правопреемства, журнал

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«Третейский суд» 2000, N 4 <http://arbitrage.spb.ru/jts/2000/4/art01.html>; Born G.B. International Commercial Arbitration. V. 1. Wolters Kluwer, 2009, С. 1188; Сеглин Б. Арбитражная оговорка // Хозяйство и право, 1995, N 2; Исполнение решений Международного коммерческого арбитражного суда при ТПП РФ и иных международных арбитражных судов // Хозяйство и право, 1998, N 10, С. 102.

¹⁸ Stéu Fouchard, Gaillard, Goldman - On International Commercial Arbitration. Kluwer Law Publishing, 1999, 416, էջ 214: Համաձայն հեղինակների՝ երբ կողմն առարկում է արբիտրաժային դատարանի իրավասության դեմ՝ հիմքում դնելով հենց արբիտրաժային համաձայնության անվավերությունը, ապա արբիտրաժային դատարանն իրավասու է քննարկելու իր իրավասության մասին հարցը՝ հենվելով հենց «competence – competence» սկզբունքի վրա:

Այկ Օգանեսյան

Управляющий партнер ООО “Оганесян и партнеры”,
Соискатель кафедры гражданского права юридического
факультета Ереванского Государственного Университета

РЕЗЮМЕ

Проблемы применения некоторых оснований отмены арбитражного решения в Республике Армения

В статье изучены, проанализированы и классифицированы ряд оснований отмены арбитражного решения, условия и особенности их применения и толкования. В частности, проанализированы те основания отмены решения, на которые ссылается сторона производства по оспариванию арбитражного решения и которая несет бремя доказывания наличия этих оснований. В статье приведены и проанализированы также международные договора, модельный закон и международный опыт касательно применения вышеуказанных оснований. Отдельное внимание уделено кругу вопросов, подлежащих установлению судом при изучении оснований отмены арбитражного решения, а также единообразного применения арбитражной терминологии.

Ключевые слова: *арбитраж, арбитражное решение, Нью-Йоркская Конвенция, оспаривание арбитражного решения, отмена, исполнение решения, арбитражное соглашение.*

Hayk Hovhannisyan

Managing Partner “Hovhannisyan and partners” LLC,
Applicant of the Chair of Civil Law of the Faculty
of Law of the Yerevan State University

SUMMARY

Problems of applying of several grounds for setting aside of an arbitral award in the Republic of Armenia

In Article the grounds of setting aside of arbitral awards are researched, analyzed and classified as well as the specifics and conditions of their interpretation and application. In particular, the author analyses the grounds that are being pointed by the applicant's initiative and thus the applicant bears the burden of proof of existence of those grounds. International treaties, model law and international practice are brought in the Article related to application of the aforementioned grounds. Separate attention is paid to number of questions regarding the circle of questions subject to be determined by the court while examining the grounds for setting aside, as well as the issues of uniform application of arbitral terminology.

Keywords: *arbitration, arbitration award, New York Convention, challenging of arbitral award, setting aside, enforcement of the award, arbitration agreement.*